ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱՐՇԱԼՈՅՍ

ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ԼԵԶՈՒՈՎ

Առաջին երեսում տողը (petite) 6 շահի
Վերջին ,, ,, ,, 3 շահի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Թաւրիզում ամիսը 1,50
Գաւառներում ,, 2 ղր.

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆ ԱՐԺԷ 8 ՇԱՀԻ

Հասցէն՝ Redaction „Archalousse“ Tauris (Perse) | ادارهٔ روزنامهٔ «آرشالوس» تبریز

Խմբագրութեան հետ գործ ունեցողները դիմեն Հայկ Խախանեանին

Բ. ՏԱՐԻ — № 19 ՀԻՆԳՇԱԲԹԻ 25 (8) ՅՈՒԼԻՍ 1919 Թ. — Բ. ՏԱՐԻ

Շարունակւում է բաժանորդագրութիւն
Թաւրիզի Հ. Յ. Դ. պատանեկական միութեան օրգան
„ԱՐՇԱԼՈՅՍ“
շաբաթաթերթի

Թաւրիզում ամսական բաժանորդագինն է 1,50
Գաւառներում ,, ,, 2 ղրան։
Բաժանորդագրուել ցանկացողները դիմեն Աշոտ Մ. Բաղդասարեանին

ԱԶԴ

Ուղարկելով անդորրագրերը, խնդրում ենք մեր յարգելի բաժանորդներից իրենց բաժանորդագները յանձնել ցրիչին կամ ինձ։

„Արշալոյս“ի ֆինանսական Յանձնախմբի կողմից
Աշոտ Մ. Բաղդասարեան.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԵՐՈՍ ԴԱՇՆԱԿՆԵՐԸ

Հայ մանուկ հանրապետութիւնը տագնապի և վտանգի օրեր է ապրում.

Իր ծննդեան օրից՝ ի վեր մերթ շրջապատուած տաճկական բռնակալ պետութեան արիւնարբու զօրքերով, մերթ դիմացիր հարեան պետութիւնների ոտնձգութիւններին և համարեա անընդհատ ենթակայ ներքին և հարեան թրքութեան ըմբոստացումներին, ջարդերին և թալաններին, եթէ այս քաղաքական վտանգներին, սպառնալիքներին աւելացնենք և ներքին սովն ու համաճարակը՝ ապա ուրեմն մեզ համար պարզ պիտի լինի, թէ ինչ կառավարութիւն էր հարկաւոր, որ այդքան արագ և գահավիժօրէն միմեանց յաջորդող արտակարգ դէպքերը դիմագրաւելու և դրանց դէմ առնելու աւելի գերմարդկային ճիգեր թափէր, քան հայկական կառավարութիւնը։ Բայց միմիայն արտաքին և ներքին օտարացեղ վտանգն ու դժուարութիւնը չէ եղել սպառնացող և հայկ. կառավարութեան ոտների տակ փոս փորող, այլ՝ հենց մեր սեփական ժողովրդի այն խաւերը, որոնք ամեն պարագային և ամենուր եղել են և գտնուել ցեղերտիքի և դրանց առանձնայատուկ բնազատողի դերում։

Ամեն անգամ, երբ վտանգն է դամոկլեան սրի նման կախուած եղել մեր հանրապետութեան գլխին, նոքա բարախների սուր հոտառութեամբ, դեռևս նախօրօք անախորժ դէպքերի հոտն առնելով լքել են թէ մեր կառավարութեան և թէ ժողովրդին (որի անունից և շահերից միշտ էլ սովոր են անպատասխանատու կերպով խօսելու) և մտել իրենց վայել պատեանի մէջ և աչքները յառած դիտել՝ թէ հրապարակում մենակ մնացած Դաշնակցութիւնը ինչ պիտի անի և նոյնիսկ սրտատրոփ սպասել անյաջողութիւնների, որպէս զի առաջին իսկ յարմար րոպէին, երբ իրենց յանցապարտ գլուխը անվտանգ կարող է լինել, դուրս գալ հրապարակ հայհոյելու և դասալիք ամօթապարտին վայել պոռոտախօսութեամբ քննադատելու հայկական կառավարութեան՝ յանձինս մենակ մնացած Դաշնակցութեան։

Չարձանագրենք բոլոր փաստերը մի առ մի, հերիք է միայն յիշել հայ-վրացական կոնֆլիկտը, սահմանամերձ գաւառների առթիւ, և մեր բուրժուազիայի—յանձին «Հայ ժողովրդական» կոչուած կուսակցութեան—բռնած ամօթապարտ և երկչոտ դիրքը և... ինչու հեռու գնալ. ներկայ նորօրեայ քաղաքական տակնուվրայութիւնը։

Ո՞ւր են ժողովրդականները և մեր իրականութեան իրենց սոցիալդեմոկրատիզմը սօսինձով փակցնող, հայ ազատագրական անցեալ մարտնչումների մասին խօսող ու ճառող, բայց մազաչափ անգամ գործ չկատարած ռ. սոցիալ դեմոկրատներն ու սոցիալ-յեղափոխականները. Գիտենք, որ դուք—միմիայն ամուլ մտքերին վայել քննախնդիր. ռուսական և կուսակցական նեղմտութեան մրուրով արբած—քաշուել էք ասպարէզից՝ պատրուակելով, որ Դաշնակցական վարչապետը յայտարարեց միացեալ Հայաստանի պարլամենտի ակտը և պարլամենտ ընդունեցին 12 տաճկահայ պատգամաւորներ։

Բայց ժողովրդի սրտացաւ բարեկամներ, եթէ դուք ձեր կոչումն էք համարում օգտակար լինել ժողովրդին, մարտնչել նրա ազատութեան համար. նաև դուք, պարոնայք «սոցիալիստներ», որ միմիայն անունով և թէօրիայով սոցիալիստներ լինելու յաւակնութիւնն ունիք, եթէ դուք պաշտպան էք աշխատաւորութեան շահերի՝ ապա դուրս եկէք ասպարէզ միահամուռ գործելու և դիմագրաւելու այն վտանգը, որը աշխատաւորութեան անմիջական կեանքի, շահերի հետ է կապուած։ Իսկական կուսակցականը վտանգի րոպէներին մի կողմ է թողնում ամեն տարաձայնութիւն և լոկ անձնական հաշիւներ և ասպարէզ է նետւում գործելու և ծառայութիւն մատուցելու։

Դուք՝ երկչոտ ու խօսող, որ միմիայն գիտէք փողեր հնչեցնել, մեծաբարբառ ճառել և դասեր նիւթել խաղաղ րոպէներին, իսկ վտանգի պահուն քաշել ձեր բները կամ՝ այդ վտանգը մի քիչ աւելի սպառնալից դառնալու դէպքում կարէք փախչել և մոռացած ժողովուրդն ու մասսան, լքել ամեն ինչ և միմիայն ձեր չոր գլուխը և ձեր խղճուկ անձն ազատելու մասին մտածել։

Գիտենք, որ ձեզ համար անհասկանալի և անմատչելի է անձնուրացութեան գաղափարը—լինել տանջուած և վտանգուած ժողովրդի հետ և մարտնչել՝ եթէ նա է մարտնչում և յաղթել ամեն մի բռնաջնջող վտանգ, հաւատարիմ դաւանած սկզբունքներին։ Տեսականին զուգընթաց պէտք է լինի գործնականը։

Մենք գիտենք, որ դուք ընդունակ չէք ոչինչ անելու, և դարձեալ Դաշնակցութիւնը պիտի լինի, որ այս անգամ ևս, ինչպէս շատ անգամներ, մեր աշխատաւորութեան վտանգից ազատողը և մեր հանրապետութեան վերակազմողը։ Մենք ուզում ենք այս պատմական և տագնապի օրերին յիշեցնել ձեզ ձեր յանցապարտ և խղճալի դիրքը, որովհետև վտանգն անցնելուց յետոյ մենք ուրիշ շատ աւելի կարեւոր գործեր կունենանք, քան՝ ձեր հայհոյանքներին պատասխանելը կամ դէմ մի փոքր ուշադրութեան արժանացնելը։

Զգացէք ձեր ամօթալի դրութիւնը և ձեր էութեան ոչնչութիւնը և գոնէ լռեցէք, երբ անձնուրացներն են գործում։

ԴԵՄՈԿՐԱՏԻԿ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ*)

—

Անցեալ անգամ տեսանք թէ ընտրութիւնների ընդհանուր և հաւասար լինելն ինչ չափով օգտակար են և ինչպիսի անհրաժեշտութիւն են ներկայացնում մի երկրի աշխատաւորութեան համար։ Բայց բաւական չէ անշուշտ, որ ընտրութիւնները լինեն ընդհանուր և հաւասար, այլ դրանք պէտք է լինեն և ուղղակի ու գաղտնի։ Ունենալ ուղղակի ընտրական իրաւունք, այդ նշանակում է ցանկացեալ մարդուն, առանց որևէ միջնորդութեան, ուղղակի կերպով պատգամաւոր ընտրելու իրաւունք ունենալ. այսպիսով դէմն առնում է երկաստիճան կամ բազմաստիճան ընտրութիւնների, որոնցից առաջնի դէպքում ժողովրդի ընտրած պատգամաւորներն են ընտրում այն պատուիրակներին, որոնք պիտի լինեն իսկական ներկայացուցիչներ, իսկ երկրորդի դէպքում այդ «մաղումն» մի քանի անգամ է տեղի ունենում։ Երկաս. կամ բազմաստիճան, մի խօսքով անուղղակի ընտրութիւնների դէպքում բնականաբար դարձեալ տուժում է աշխատաւորութիւնը, որովհետև թէ կուսակցութեան ազդեցութիւնը, թէ կաշառելու հեշտութիւնը և թէ շահագործող տարրերի ընտրելը հնարաւոր և դիւրին են լինում սակաւաթիւ ընտրողների ժողովում, քան երկրի ամբողջ զանգուածի մէջ. մինչդեռ ուղղակի ընտրութիւնների դէպքում ժողովուրդն անմիջական կերպով ընտրում է իր ցանկացած մարդկանց։

Վերջապէս որպէսզի ընտրութիւնների ժամանակ հարուստ, գործարանատէր, կալուածատէր, մի խօսքով ուժեղ տարրերի ճնշում գործադրելն իրենց ստորադրեալների, աղքատ և թոյլ տարրերի վրայ։ — մի բան, որ հնարաւոր և հեշտ է բաց քէսարկութեան դէպքում — դրի անհնարինութեան սահմաններում, ընտրութիւնները պիտի լինեն գաղտնի, այսինքն փակ քէսարկութեամբ, որպէսզի դէպքերում ընտրողը, իր ցանկացածների անունները կամ իւր ցանկացած կուսակցութեան թերթիկն առանց որեւէ արգելքի եւ առանց որեւէ մէկի գիտութեան, կարող է գցել քէսաուփերի մէջ, որով նրա քաղաքական իրաւունքն ամեն տեսակի բռնադատութիւններից զերծ կը լինի։

Իւրաքանչիւր քաղաքական կուսակցութիւն, որ ունի իւր ծրագիրն ու հետևողների որոշ մասսան, կը նշանակէ ունի մի հայեցակէտ, ըստ որի պաշտպանում է երկրի որոշ, թէկուզ չնչին տոկոս ազգաբնակութեան շահերն ու իրաւունքները, ուստի և միանգամայն անարդարացի կը լինէր, եթէ այդ փոքրամասնութիւն կազմող մասսան զրկուէր իւր ընտրական իրաւունքից, նամանաւանդ այնպիսի խնդիրներում, որ մեծ նշանակութիւն ունեն նրա քաղաքական հայեցակէտերի ամբ կամ այն կերպ վճռելու համար։ Այդ անարդարացիութիւնն առաջանում է այն դէպքում, երբ որ ընտրութիւնները կատարուում են ըստ մեծամասնութեան,— ժողովրդական ներկայացուցիչ է դառնում նա, ով ստանում է ձայների մեծամասնութիւն։ Խուսափելու համար այսպիսի անարդարացի և անցանկալի իրողութիւնից, պէտք է գործադրել համեմատական ընտրական ձևը, որպիսի դէպքում տարբեր խմբակցութիւնների—լինեն դրանք կուսակցական, ազգային, դասակարգային այդ միևնոյն է ներկայացուցիչների թեկնածուները ուղիղ են համեմատուում այդ խմբակցութիւնների ընտրեալների թուի հետ։ Այսպիսով տեսնում ենք, որ համեմատական ներկայացուցչութեան անհրաժեշտութիւնը կայանում է այն բանում, որ այդպիսով իրենց երկրի պետական կեանքում կարողանում են մասնակցել զանազան շահերի, կարծիքների, ուղղութիւնների մարդիկ ըստ իրենց թուական չափի։

Ահա ինչպէս այսպիսի ընտրական սիստեմի գործադրութիւնն են պահանջում աշխատաւոր մասսայի շահերի պաշտպան կուսակցութիւնները—ինչպիսին է մեր կեանքում Հ. Յ. Դաշնակցութիւնը,—նոյնպէս և այս ձևը պիտի պահանջէ աշխատաւորութիւնը, որովհետև այսպիսի ընտրական ձևն է, որ ներկայացնում է մի երկրի պարլամենտի կամ մի որևէ այլ համապետական հիմնարկութեան կատարեալ ժողովրդական ներկայացուցչութիւն լինելու երաշխիքը։

Հրաչ=

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՇԵՄԲԻՆ

—

Մօտենում է դպրոցական նոր տարին և իւրաքանչիւր գիտակից աշակերտի սրտում, որ զգում է ու գիտէ ուսման բարձր ու վեհ օգուտները, նորից ուրախութեան կայծեր են բորբոքում և ապագայի վառ ու երաշտն մտքերով տարուած, նա մի բոպէ մոռացութեան մէջ է ընկնում. առանց ի նկատի ունենալու այնքան էլ ոչ մխիթարական մեր ներկան և մեր դաժան ու սև բախտը։

Ահա տասը տարի է ինչ բացուել է Թեմ դպրոցը, բայց այդ տասը տարուայ ընթացքում մեզ չի յաջողուել ունենալ մի լրիւ և ուժեղ մանկավարժական կազմ, շնորհիւ մի շարք քաղաքական և նիւթական անբարեյաջող պայմանների։ Աշակերտութեան կրթութեան և դաստիարակութեան վրայ բացասաբար ազդող մի անհերքելի իրողութիւն է այդ, որին ամեն տարի ենթակայ ենք լինում մենք աշակերտներս։ Դա մի խնդիր է, որ իւրաքանչիւր տարի մտահոգութեան նիւթ է դառնում մեր հոգաբարձութեան համար, սակայն վերջինս ոչ մի անգամ էլ հնարաւորութիւն չի ունենում իրագործելու իւր դպրոցի բարձրացման և կոչման բարձրութեան վրայ դնելու փորձերը։

Անժխտելի է անշուշտ մեր դպրոցի ուժեղ և աւելի քան բարձր կանգնած լինելը իւր հիմնելու սկզբնական տարիներում. դրա պատճառներն անշուշտ խորն են և հասկանալի։ Նախ այն քաղաքական և նիւթական շատ ու քիչ լաջող պայմանները, որոնց մէջ տպրում էինք դպրոցի հիմնելու օրերում, և այն ոգևորութիւնը, որ տիրող էր հասարակութեան մէջ, Թեմ. դպրոց ունենալու վառ ցանկութեան։

Ինչպէս ասացինք, դպրոցի հիմնելու օրերում, և այն ոգևորութիւնը, որ տիրող էր հասարակութեան մէջ, Թեմ. դպրոց ունենալու վառ ցանկութեան։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

* * *

Սպասեցի, սպասեցի երբ չեկար,
Սիրտս լցուց արտասուքի չիթերով.
Սրտիցս, կանչեցի քեզ ես երկար,
Տառապանքի ու արցունքի զիլերով։

Դիլերն սփռեց իւր թեները սեւթոյր,
Երբ դու եկար երազի պէս ու անցար,
Էլ իմ հոգին չունի սիրոյ հրապոյր,
Էլ քո հոգին երգեր չունի ինձ համար։

Կախարդ աղջիկ, կախարդեցիր իմ հոգին,
Ծով աչերիդ ժպիտով խելագար։
Սէրը մահու բաժակ է լոկ դառնագին,
Կախարդ աղջիկ, կախարդեցիր ու անցար։

Սուանդ

* * *

Ադդան ունէր թափից պոկած մի վարդ։ Նա անպայման ցանկանում էր այդ վարդը տալ Սիրվարդին։

Զէ՞ որ Սիրվարդը կազմուած է աչեր և վարդ բառերից. սակայն իր վարդը կիզիչ արևի տակ կորցրել է իր գոյնը և զարթութիւնը. Ո՛չ, նրա անուան չի համապատասխանում. սիրոյ վարդը պէտք է լինի կարմիր։

Երկար մտածեց Ադդան։ Ցանկարծ նրա գունատ դէմքով անցաւ մի ժպիտ ու արագ վերցրեց անկողը, ծակեց իր մատը, խորը, շատ խորը և թողեց արիւնը հոսի, ապա հոսած արիւնով ներկեց գունատ վարդը և յետոյ թարմացրեց իր պարզ ու ջինջ արցունքներով։

Ամեն ինչ պատրաստ էր։ Այժմ վարդը փնտրում էր իր կարմրութեամբ ու թարմութեամբ։ Ադդան նայեց սրտի անհուն բերկրանքով և նա լուռ կարմիր վարդը մօտեցրեց շրթերին, ապա նազանքով սղմեց իր կրծքին և դուրս թռաւ փողոց։

Սրտի թրթիռով մօտեցաւ Սիրվարդին. դողդողուն ձեռքը պարզեց, մեղմ մրմնջալով «Քեզ համար է այս, Սիրվարդ»։

Նա վերցրեց, մի բոպէ նայեց. ապա արագօրէն ամրացրեց իր կրծքին մտածելով. — Է՛հ կարմիր վարդ է տեսքով գեղեցիկ, հոտով դիւրալի, Նա թող փայլի իմ կրծքին, թող դրաւի ուրիշների ուշադրութիւնը, թող նրանք նախանձեն ինձ։

Նա խիստ պարծանքի համար։

Գեղեցիկ վարդը, որ սովոր էր իր թարմութիւնը ստանալ տանջուած աչքերի արցունքից թառամեց մի քանի վարկեանից յետոյ։

Այո, նա թառամեց, որովհետև զգնուում էր պարծենկոտ մարդու կրծքում, որը դէն չպրտեց կարմիր վարդը, այն վարդը, որ մի փոքր խնամքից դարձեալ կատանար իր աշխուժութիւնը, և նրա տեղ ամրացրեց մի ծաղիկ։ Դա տուել էր մի բարձրահասակ, կրքոտ, սևաչեայ մի թեթեւսոլիկ աղջիկ։

Այժմ Սիրվարդը քայլում էր հրապարտ իր նոր ծաղիկով։ Նրա հոտառութեան չարտնակ դիպչում էր մի անախորժ հոտ և վերջը, երբ արդէն սկսեց զզուանել, հետաքրքրուեց, թէ որտեղից է այդ։ Հասկացաւ. դա իր կրծքի ծաղիկիցն էր գալիս։ Վայրագօրէն պոկեց ծաղիկը և դէն չպրտեց զայրացած, թէ ինչու պոկեց կարմիր վարդն իր կրծքից այդ անպէտք ծաղիկի համար։ Նա յուզուած մօտեցաւ այն տեղին, ուր ձգել էր վարդը. սակայն չդտաւ։

Մէկ օր անց Սիրվարդն անցնելիս մի հասնատ մարդու կրծքում տեսաւ Ադդայի կարմիր վարդը։ Նա յուզուեցաւ և ապա զլխիկոր մօտեցաւ նրան, խնդրեց Ադդայի կարմիր վարդը։

Ո՛չ, եղբա՛ պատասխանեց, այդ իրաւունքն ինձ չէ վերապահուած, այլ, այլ օրիորդին։ Խնդրեցէք նրանից. եթէ նա նորից նէրեցաւ, ես պատրաստ եմ ձեզ յանձնելու։ Երէկ ես այստեղից անցնելիս տեսայ օրիորդ Ադդային, նստարանի վրայ գլուխը թեքած, աչքերն արցունքով նայում էր այս վարդին ու հառաչում։ Մօտեցայ ու կարեկցաբար հարցրի.— Օրիորդ, ինչու էք արտասուում։ Նա պատասխանեց «Արեամբս ներկուած, գունաթափ արցունքով թարմացրած վարդս նեսել են ոտքերի տակ»։ — Ո՛չ, բացականչեցի ես, քո վարդն երբէք ոտքերի տակ չի մնալ, թոյլ տուէք, որ ես վերցնեմ, թարմացնեմ և իմ կրծքիս ամրացնեմ։ Խոստանում եմ անթառամ պահել։ Նա տնքաց բարի էր, որ թոյլ տուեց վերցնելու հաւատալով իմ ազնուութեան վրայ։

Բաժանուեցինք Սիրվարդն ընկաւ խորը մտատանջութեան մէջ. արդեօք գնա՞լ, օրիորդից խնդրե՞լ, տատանուում էր։ Նա յանկարծ ցնցուեց, գունատուեց։ Հեռուից երևաց Ադդան. գալիս էր հպարտ, ցոյց տալով իր

կութեան ամթիւ, երաշխիք էին դպրոցի ուժեղ և բարձր լինելուն։ Սակայն այդ յոյսերի մեծագոյն մասը իրականացած չեն այսօր, շնորհիւ մի շարք պատճառների, որոնց արմատները պէտք է փնտռել համաշխարհային պատերազմի կործանիչ հետևանքների մէջ։

Մերթ գաղթի ժամանակ դըպրոցի փակւելու պատճառով աշակերտներ մի ամբողջ տարի դըսում մնալը, մերթ անհամապատասխան մանկավարժների մի դպրոցում լինելու և մերթ էլ տեղական ուժերով բաւարարւելու ստիպողականութիւնը պատճառ դարձան մի վիճակի, որի մէջ ապրում էինք մենք։

Այս բոլորին գալիս են միանալու և մեր առաջիկայ տարւայ մասին ունեցած վառ յոյսերի անդունդի ծայրին կանգնած և գահավիժման պատրաստ լինելու իրականութիւնը, որով մեր VII-րդ դասարան ունենալու տենչերը կրկին խորտակւում են և յուսահատ ու յոռի տրամադրութեան մէջ են գըտնում մանուկ հայրենիքում բարձրագոյն կրթութիւն ստանալու ցանկութիւն ունեցող մեր վերջին դասարանի աշակերտներին։

Ստեղծւել է մի վիճակ, որ անմիջական կապ ունի մեր ապագայի հետ և վճռական ազդեցութիւն մեր կեանքի մէջ ունենալիք գոյութեան կռւի համար, մի բան որ մասամբ կախում ունի մեր հոգաբարձութեան ջանքերից, որի առթիւ և մեր յարգելի հոգաբարձութեան ուշադրութիւնն ենք հրաւիրում ու խնդրում ներկայ տարում գոնէ VII-րդ դասարանի բացումը աշխատել իրականացնել։

Վեցերորդեցի

ԱՆՑ ՈՒ ԴԱՐՁԸ ԹԵՄ. ԴՊՐՈՑՈՒՄ

Մօտ երեք ամիս է ինչ ընտրւել է աշակ. միութեան ներկայ վարչութիւնը, սակայն այդ եռամսեայ ժամանակից յետոյ նոր է բարեհաճել սկսել իր գործունէութիւնը։ Կարծես թէ այս անգամ նորընտիր վարչութիւնը, որ կազմւած է այն բողոքողներից, որոնք իրենց առօրեայ ինտրիգներով ձանձրացնում էին աշակերտութեան և վարչութեան, վերջապէս իր կաշւի վրայ զգաց այն լուծը, որ դրւում է աշակ. միութեան վարչութեան վրայ և այն խոչընդոտները, որ կան նրա առաջ։

Դեռ չխօսենք այդ մասին, որովհետև աւելի աչքի ընկնող և ոչ աշակերտավայել գործեր են կատարւում հենց իրենց վարչութեան անդամների մէջ, որոնց մասին աւելի անհրաժեշտ է խօսել.

Աշակ. միութեան վարչութիւնն է որ պէտք է հսկի առհասարակ աշակերտների վրայ, նա է, որ պէտք է օրինակ հանդիսանայ փոքրերին, նա է որ պէտք է լինի առաջնորդ աշակերտութեան, այն ինչ կարծես թէ ներկայ աշակ. միութեան վարչութիւնը եւս առաւել վարչութեան նախագահը ամենևին անգիտակից են իրենց կոչման վերաբերմամբ, կարծես թէ դեռ եւս չեն ճանաչում իրենց դերը, դիրքն ու պարտականութիւնները, և իրենց թոյլ են տալիս անելու այն, ինչ որ աններելի է, աններելի՝ հենց այն տեսակէտից, որ նրանք կազմում են աշակ. միութեան վարչութիւն և, նրանք դեռ աշակերտութեան «բարձր» խաւերից են ընտրւած. այդպիսիները պէտք է իրենք զգան, որ բիլիարդի սենեակի դռներն միանգամայն փակ պէտք է լինեն աշակերտութեան առաջ. այն ինչ դեռ իրենք՝ աշակերտութեան վարիչները ժամերով դուրս չեն գալիս այդ կանաչ սեղանաւոր սենեակից և չեն կշտանում անվերջ «պարտիներից»։

Եւ, ինչ են այդ վարիչների մինչև այսօր կատարած գործերը, ինչ գործունէութիւն են ցոյց տըւել այս երեք ամսւայ ընթացքում նրանք. համարեա ոչինչ, չհաշւած գրադարանի սեկցիայի առանց այն էլ անփոյթ գործունէութիւնը և դասախօսութեան սեկցիայի վերջին դասախօսութիւնները։

Բայց մի՞թէ այդ պէտք է լինէր վարչութեան ամառային գործունէութիւնը, մի ժամանակաշրջան, երբ բոլորն ազատ են աշխատանքներից և կարող են նւիրւել իրենց յանձնւած գործերին։

Դեռ երեկ էր, որ հենց այն աշակերտը, որ ցաւում էր աշակերտական միութեան վրայ, ասելով թէ աշակ. միութիւնը կանգնած է իր անկման նախօրեակին. այսօր հենց ինքը այդ «սրտացաւ» ընկերն է վարկաբեկում աշակ. միութեանը, հենց ինքն է ցեխի մէջ գլորում նրան. էլ այդ ընկերը, որի ձեռքում է գտնւում այսօր աշակերտական միութեան ղեկը, ինչ տեսակ պէտք է սրբէ նկատողութիւն անի փոքրերին, քանի որ հենց իր արարքը աւելի վատթար և պախարակելի է քան մի ուրիշի արածը։

Այս բոլորին ականատես լինելով, մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ այդ վարչութիւնը ընտրւել է միայն վարչութիւն կոչւելու համար, իսկ վաղը ինչ հաշիւ պէտք է տայ աշակերտութեան չգիտենք։

Վերջացնելով մեր խօսքը մենք աշակերտական միութեան վարչութեան ուշադրութիւնն ենք հրաւիրում դէպի աշակերտական գործերը, եւ առաւել իրենց մէջ տեղի ունեցող այն վատ արարքները, որոնք արատաւորում ու վարկաբեկում են ընդհանուր աշակերտութեան պատիւը. արարքներ, որոնք վատ օրինակներ կարող են լինել աշակերտութեան և արատաւորել հենց այն միութեան, որի վերաբերմամբ դուք այնքան սրտացաւ ու շահագրգռւած էիք ձեւանում այն ժամանակ, երբ հենց ձեր՛ իսկ մեղքերի ու ինտրիգների պատճառով աշակերտութիւնը զրկւեց իր գործունեայ և փորձւած ուժերից։

Այո, ընկերներ կանգնէք ձեր կոչման բարձրութեան վրայ և եղէք աշակերտութեան դէպի բարին և ճշմարիտը առաջնորդող օրինակներ, հակառակ դէպքում կը պայթի ձեր գլխին աշակերտութեան դժգոհութեան բողոքն ու զայրոյթը։

Աշակերտ

վեհանձնութիւնը։ Սիրվարդն աւելի ընկճւեց. միայն այժմ զգաց իր փոքրութիւնը։

— Ահա նա մտնում է. ինչ անել։

Մի քանի քայլ և Ադդան կողքով անցնում էր։

Ներեցէք օրիորդ, գրեթէ ճչաց ի... ինչ, պէտք է նե՞րել ձեր անփութութիւնը դէպի վարդը։

— Ա՛խ այո, բայց ոչ...

— Ի՞նչ է պատահել։

— Ախ օրիորդ ներեցէք, որ ձեր վարդը դէն եմ ձգել, մի անախորժ, բայց գեղեցիկ ծաղիկի համար: Այժմ խնդրում եմ թոյլ տաք ձեր վարդը վերցնեմ պ. Լեւոյից։

— Ո՛չ, դժբախտաբար, այսուհետև իմ վարդերը չպիտի զարդարեն այն կրծքերը, որտեղ ամեն տեսակ ծաղիկներ տեղ ունեն։

Roza

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

III

Բանւորական պահանջներ.

Այս անգամ արդէն մեր խօսքը պիտի լինի բանւորների անտեսական և առողջապահական մի շարք պահանջների մասին, որոնք մեծ տեղ են բռնում Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրի մէջ։ Ութժամեայ բանւորական օր. ահա առաջին պահանջը։ Գործարանային բանւորների վզին կրկնակի լուծ կայ դըրւած. «տէրերի» իշխանութիւնը, որոնք շահագործում են բանւորներին, և կառավարութեան պաշտպանութիւնն այդ նոյն տէրերին, ճընշելու բանւորութեան. Բանւորը ստիպւած լինելով աշխատել 12—16 ժամ և նոյնիսկ աւելի, շատ պարզ է, որ հնարաւորութիւն չպիտի ունենայ ուրիշ բաների մասին մտածելու. Նա բռնում է իբրև մի մեքենայ-առանց մէջքը շտկելու. որպէսզի քաղցից չմեռնի։ Բայց այդպէս չպիտի լինի։ Օրեկան ամենաշատը պիտի աշխատել ութ ժամ, առողջական աշխատանքներում, իսկ եթէ աւելի ծանր է աշխատանքը ժամերի թիւն էլ պիտի կրճատել։ Այդքանն էլ միայն ժամանակաւոր բանւորների համար, իսկ 16—18 տարեկաններին ոչ շատ օրական 6 ժամից. իսկ նրանք, որոնք 16 տարեկանից փոքր են, նրանց տեղը գործարանը չէ, այլ դպրոցը։ Իհարկէ այդ բանը ձեռնտու չէ կապիտալիստ-գործարանատէրերի համար և նրանք կարող են փոխադարձ համաձայնութեամբ հակառաջարկ անել. այն է վարձը քըչացնել. օրեկան ութ ժամով, ուզում ես բանիր, չես ուզում դուրս եկ և նրանք շատ անգամ յաջողում են, շնորհիւ աշխատող ձեռքերի շատութեան, իսկ այդ դրութիւնից ազատւելու համար մի միջոց կայ միայն, դա աշխատանքի նւազագոյն վարձատրութիւնն է, որը շեշտւած է Դաշնակցութեան մինիմում ծրագրում. այն է, որ օրէնքով որոշւած մի վարձ պիտի լինի, որից պակաս չի կարելի վճարել, այդ բարենորոգումները, մի շարք երկրների բանւորներ արդէն կարողացել են ձեռք բերել. Շատ պարզ է, որ աշխատավարձի մինիմումը տարբեր կը լինի ըստ աշխատանքի և տնտեսական պայմանների. Նւազագոյն աշխատավարձով հնարաւորութիւն պիտի տալ բանւորին տանելի կերպով ապրելու, իսկ որովհետև կենսական մթերքների գները շուկայում փոփոխական են, ուրեմն փոփոխական պիտի լինի և աշխատավարձի նւազագոյն չափը։

Արդիւնաբերութեան զարգացումը շուկայ է դուրս բերել կանանց մի հսկայ բանակ։ Դրանում իհարկէ աշխատող ձեռքերն աւելանում են ի վնաս բանւորութեան. որովհետև կանայք աւելի պակաս արժէքով են աշխատում, իսկ այդ շատ օգտակար է գործարանատիրոջ և այդ բանը նկատի ունենալով սոցիալիստական կուսակցութիւնները պահանջում են կանանց էլ տղամարդկանց հաւասար վարձատրել, նրանց չծանրաբեռնել իրանց ուժերից վեր աշխատանքով և արգելել աշխատանքից ծննդաբերութիւնից 6 շաբաթ առաջ և 4—6 շաբաթ յետոյ։ Գործարանատէրերը բանւորներին ճնշելու համար մի ուրիշ միջոցի էլ են դիմում, այն է, օտար երկրներից բանւորներ են հրաւիրում, որով աշխատաւոր ձեռքերն աւելանում են ի վնաս տեղացիների. այդ շատ անգամ իհարկէ սրում է բանւորների յարաբերութիւնը և դժբախտ դէպքերի առիթ տալիս. իսկ դրանից էլ ազատւելու համար առաջարկւում է մի միջոց, այն է, որ օտար երկրացի բանւորները եւ վայելեն սոյն

ՍԱԼՄԱՍՏԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

—

Այսօր ուրախութեամբ և հրրճուանքով արձանագրում ենք Սալմաստի Հ. Յ. Դ. պատանեկական միութեան կազմւելը։ Ուրախութեամբ, որովհետև դա մի երևոյթ է, որ գալիս է ապացուցելու թէ որ ատրճանի գիտակից գիրքի վըրայ է կանգնած ներկայումս պատանեկութիւնը։

Տարիներ շարունակ, մեր փայփայած իդէալներից մէկն էր ունենալ հենց Թաւրիզում պատանեկական միութիւն, սակայն երկար ժամանակ այդ մեզ չէր յաջողւում. ուրեմն այսօր որքան կրկնապատկւած և անհուն պէտք է լինի մեր ուրախութիւնը, երբ բացի տեղական, ունենք նաև գաւառի պատանեկական միութիւն, որոնք անմիջական կապ պէտք է ունենան իրար հետ։

Վերջապէս մի օր է հասել, որ պատանեկութիւնը զգացել է իւր վրայ դրւած յոյսերի ու պարտականութիւնների ծանրութիւնը և եկել է գիտակցութեան ու կանգնել իւր կոչման բարձրութեան վրայ. եկել է մի օր, երբ պատանեկութիւնը ցանկութիւն է յայտնում սովորելու իւր ուսուցիչներից ապագայ քաղաքացու համար անհրաժեշտ ուսմունքը և լինել նրանց արժանաւոր աշակերտներից։ Դա մի երևոյթ է, որ այսօր բարձր պատիւ է բերում Սալմաստի պատանեկութեան։

Հանդէս գալով, Սալմաստի Հ. Յ. Դ. պատանեկական միութիւնն, անշուշտ մեծ դեր ունի կատարելու իւր շրջաններում. հենց այսօրւանից իսկ նրայ վրայ դրւում են մեծամեծ պարտականութիւններ և յիայոյս ենք, որ այդ պարտականութիւնները Սալմաստի պատանեկութիւնը եռանդուն ու յամառ գործունէութեամբ իրենց ցանկալի հանգոյցին կը հասցնէն։

Սալմաստի պատանեկական միութիւնն է, որ պէտք է այսուհետ առաջնորդ հանդիսանայ իւր շրջանի պատանեկութեան. նա է, որ պէտք է ի մի հաւաքի նրանց և պատրաստի նրանցից ապագայի համար առողջ, պիտանի և անձնւէր քաղաքացիներ և կուսակցականներ և որ գլխաւորն է նա պարելով աշխատաւորութեան գրկում ու միշտ ականատես ու իրազեկ լինելով նրանց ցաւերին ու կարիքներին, պատրաստի նրանցից այնպիսի քաղաքացիներ, որոնք հանդիսանան աշխատաւորութեան վէրքերին սպեղանի գնողներ. այն աշխատաւորութեան, որի գրկանքներին հենց այսօր ականատես են իրենք այդ միութեան անդամները։

Յոյսեր են, որոնք անշուշտ չեն մնայ անհետևանք և կը հասնեն իրենց ցանկալի նպատակին, տալով իրենց արժանի պտուղները։

Այս բոլորից յետոյ մենք ի սրտէ ողջունում ենք Սալմաստի Դաշնակցական պատանեկական միութեան և ցանկանում ենք, որ նա ունենայ հաստատուն դիրք և փայլուն գործունէութիւն պատանեկական շրջաններում։

Ա.Ռուբ

—

օրէնքի պաշտպանութիւնը, որից օգտւում են տեղացիներն, այն է, որ օրէնքը պարտաւորեցնէ տէրերին վարձատրել օտարերկրացի բանւորներին այն չափով, ինչ չափով տեղացիներին։ Այդ բանը միայն կօգտէ բանւորներին շահագործւելուց։

Գործարանատէրերը տարւած լինելով միմիայն մի մտահոգութեամբ, այն է անվերջ փող դիզել, շատ պարզ է, որ ոչ մի ուշադրութիւն չեն դարձնի բանւորների առողջապահական դրութեան վրայ, ամբողջ ծախսերի տեղիք չտալու համար։ Բանւորներն օրւայ աշխատանքից յոգնած, պառկում են այնպիսի մութ և խոնաւ բնակարաններում, որ նոյնիսկ բաւական օդ չկայ ինչ մնաց լոյս և տեղ։ Շատ պարզ է, որ աշխատանքից յոգնած մարդն աւելի է տրամադիր լինում հիւանդութեան և նկատի ունենալով սննդի պակասութիւնն ու անառողջ բնակարանը, միշտ մահւան վտանգի տակ են լինում. այդ բանից խուսափելու համար, հարկաւոր է բնակարանները լինեն մաքուր, լուսաւոր և օդաւէտ, իսկ բժիշկն անպակաս պիտի լինի առաջին իսկ պահանջին ներկայանալու համար։ Գործարանը պիտի ունենայ նաև իր հիւանդանոցը։

Բանւորը, որպէսզի խաբւելուց վտանգից միշտ ազատ լինի, պիտի իր ներկայացուցիչներն ունենայ գործարանատիրոջ մօտ, պաշտպանելու իր շահերը։

Այդ թուացիկ տեսութիւնից երևում է, որ Դաշնակցութիւնը պահանջում է.

1) Ո թժամեայ բանւորական օր.

2) 16—18 տարեկանների համար օրական 6 ժամ։

3) Աշխատավարձի նւազագոյն սահմանում.

4) Կանայք իրենց համապատասխան աշխատանքներում պիտի նոյն վարձը ստանան, ինչ որ տղամարդիկ.

5) Կանայք պիտի ազատւեն աշխատանքից ծննդաբերութիւնից 6 շաբաթ առաջ և 6 շաբաթ յետոյ, ստանալով ամբողջ վարձը։

6) Օտարերկրացի բանւորները պիտի վայելեն նոյն օրէնքների պաշտպանութիւնը, ինչ որ տեղացիները.

7) Խիստ հսկողութիւն բանւորների առողջապահական և սանիտարական պայմանների վրայ և

8) Ապահովութիւն բանւորներին դժբախտ դէպքերի ժամանակ, երբ նրանք այլևս հնարաւորութիւն չեն ունենայ աշխատելու։

Հայկ

ԺՈՂՈՎՆԵՐ ԵՒ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Շաբաթ, ամսոյ 20-ին, տեղի ունեցաւ Թեմ. Աշակ. Միութեան դասախօսութիւնը. խօսեց Հ. Պանիրեան. «Ֆրանսիական նորագոյն գրականութիւնը» նիւթի մասին։ Բայց, ինչպէս դասախօսն ինքն էլ ասաց, վերոյիշեալ վերնագիրն այնքան էլ համապատասխան չէր գունէ դասախօսութեան ներկայ մասին։ Անցողակի Ֆրանսիայի աշխարհագրական մասին տեղեկութիւններ տալուց յետոյ, դասախօսը Ֆրանսիական գրականութեան ծագման հայրենիքներ համարեց Պրովանսն ու Նորմանդիան, որոնցից առաջինն առանձնապէս ըրպէս լիրիքական, իսկ երկրորդը էպիքական բանաստեղծութեան նախահայրենիքներ։ Սկսելով հեթանոսական դարերից նա խօսեց Ֆր. գրականութեան ծագման, նրա զարգացման և այս վերջինին նպաստող հանգամանքների և պատճառների և հեղինակների ու հեղինակութիւնների մասին։ Կանգ առնելով բանաստեղծութեան երեք—քնարական, վիպական և դրամատիքական—տեսակների վրայ. նա չմոռացաւ շեշտել նաև պրոզայիկ գրականութեան գոյութիւնը Ֆրանսիայում, հասցնելով իւր նիւթը մինչև վերածնութեան—հումանիզմի դարի ներկայացուցիչ գըրողների մասին, նա վերջացրեց իւր դասախօսութեան առաջին մասը, խոստանալով յաջորդ անգամ խօսել շարունակութեան մասին, մինչև մեր օրերը։

Ֆա՛րէնկա

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հ. Յ. Դ. Պատանեկ. Միութեան Վարչութիւնը ցրել է իր անդամների մէջ անդամակցական կարտեր։ Նոյն միութեան հերթական դասախօսութիւններն ու գրադարանի բացումը ժամանակաւորապէս յետաձգւած է դպրոցի գաղթականներով բռնւած լինելու պատճառով։

◆ Կազմւել է սալմաստեցի դաշնակցական պատանիների միութիւն, որը պէտք է լինի Թաւրիզի Հ. Յ. Դ. Պատ. Միութեան մասնաճիւղը։

◆ Հ. Յ. Դ. Պատ. Միութեան Վարչութեան որոշմամբ, շուտով տպագրութեան է յանձնւելու նոյն միութեան ներքին կանոնադրութիւնը։

◆ Ուրբաթ, ամսոյ 12-ին տեղի ունեցաւ միութեան դասախօսութիւնը, խօսեց ընկ. Ս. Աֆթ. «Կուսակց. պարտականութիւնը» նիւթի մասին, դասախօսութիւնից յետոյ տեղի ունեցաւ երկարատև մտքերի փոխանակութիւն։

◆ Յայտարարւում է ի գիտութիւն, որ պատ. Միութիւնից հեռացել են ընկերներ Աշ. Մ. Մխիթարեան և Մ. Տէր-Մարտիրոսեան։

◆ «Արշալոյս»-ի ֆոնդին տրւելիք ներկայացում «Աւազակները» յետաձգւած է շաբաթ, ամսոյ 27-ին և տեղի կունենայ սինեմա «Սօլէյ»-ում, Լիլաւայի գաւհերճի գաղթականներով բռնւած լինելու պատճառով։

—

Խնդրւում է Պատանեկ. Միութեան Վարչութեան հետ գործ ունեցողներից, այսուհետև դիմել ընկ.

ՀՐԱՉ ՏԷՐ ՕՀԱՆԵԱՆԻՆ.

Հ. Յ. Դ. Պատ. Միութեան Վարչութիւն

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մեծարգոյ խմբ. «Արշալոյս»-ի

Թոյլ տւէք ձեր թերթի միջոցով յայտարարել, որ ես այսուհետև ոչ մի կապ և առնչութիւն չունեմ «Պեղասէր»-ի խմբագրութեան հետ։

Յարգ.՝ Մուշեղ Յովհաննիսեան

1919 թ. 18 յուլիս, Թաւրիզ

ՓՈՍՏ—ԱՐԿՂ

Թաւրիզ. Սեադային.—Յաջորդիւ.

" Արշիկին.—Պատասխանը յաջորդ համարներից որ եւ մէկում։

Ղազւին. Օր. Ա. Ծառուրեանին.—Կը տպենք յաջորդիւ։

Խմբագրական մարմին

Շաբաթ, ամսոյ 27-ին Սինեմա «ՍՕԼԷՅ»-ում նախաձեռնութեամբ «Արշալոյս»-ի ֆինանսական յանձնախմբի և բարեհաճ մասնակցութեամբ թատերասէրների կը խաղացւի Շիլլերի յայտնի

ԱՒԱԶԱԿՆԵՐ

Ողբերգութիւնը 5 գործ. (8 պատկեր)

Տոմսակները նախօրօք վաճառւում են Թեմ. դպրոցի պարտիզում։

Տեղերի գներն են 10—2 ղրան։

Սկիզբն է երեկոյեան ժամի ճիշտ 9-ին։

Ատրպատ. Հայոց Թեմ. տպարան